ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆ Ը

05 փետրվարի 2016թ. № 15-Ն

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՎԱՍՏՎԱԾ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՂԱՄԱՍԻՑ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՀԱՎԱՍՏԱԳԻՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Ընդերքի մասին օրենսգրքի 45-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերը, 6-րդ մասի 1-ին կետով, հաշվի առնելով՝ «ՍԹՈՐԹՐԱՆՍ» ՍՊ ընկերության 2016 թվականի հունվարի 18-ի թիվ 16-01 գրությունը՝

Հրամայում եմ

1. «ՍԹՈՐԹՐԱՆՍ» ՍՊ ընկերությանը տրամադրել ընդերքօգտագործման իրավունքի օբյեկտ համարվող ընդերքի տեղամասից հրաժարման հավաստագիր՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել՝ «ՍԹՈՐԹՐԱՆՍ» ՍՊ ընկերության ՀՀ Սյունիքի մարզի Խաչաքար-Փարավանի ոսկի բազմամետաղային հանքերևակման տարածքում՝ երկրաբանական ուսումնասիրություններ կատարելու համար 2012 թվականի ապրիլի 25-ին տրամադրված ԵՀԹ-29/010 թույլտվությունը, լուծել՝ 2012 թվականի ապրիլի 25-ին կնքած ընդերքօգտագործման թիվ Պ-010 պայմանագիրը:

3. *Ընդերքի տրամադրման գործակալության պետին՝*

- 2 օրվա ընթացքում ծանուցել ընկերությանը հրաժարման հավաստագիրը տրամադրելու մասին,
- ապահովել համապատասխան գրառումների կատարումն օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. <Հանրապետական երկրաբանական ֆոնդ> ՊՈԱԿ-ի տնօրենին՝ ապահովել ֆոնդային փաստաթղթերում համապատասխան գրառումների կատարումը:

5. Սույն հրամանը կարող է բողոքարկվել վարչական կարգով ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելուց հետո ՀՀ օրենսդրությամբ սահմանված ժամկետներում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԵՐՎԱՆԴ ԶԱԽԱՐՅԱՆ